Արհեստական բանականության օգտագործման իրավական և բարոյական սահմանները՝ բուհական միջավայրում

Ներածություն

Արհեստական բանականությունը (ԱԲ) բուհական միջավայրում դարձել է ազդեցիկ գործիք՝ մեծապես փոխելով ուսումնական գործընթացների կազմակերպման ձևերը: Ուսանողներն ու դասախոսները հաճախակի օգտագործում են ԱԲ-ի գործիքներ՝ տեքստեր ստեղծելու, հետազոտական տվյալներ վերլուծելու կամ գիտական աշխատանքները բարելավելու համար: Այնպիսի գործիքների լայն կիրառությունը, ինչպիսիք են ChatGPT-ն կամ Grammarly-ն, առաջարկում են նոր հնարավորություններ, բայց միևնույն ժամանակ առաջացնում են նոր խնդիրներ, որոնք անհրաժեշտ է դիտարկել բուհական կրթության համատեքստում:

Մասնավորապես ԱԲ-ի գործածությունը առաջացնում է բարոյական հարցեր՝ կապված ուսանողների ինքնուրույնության նվազման, գրագողության տարածման, ինչպես նաև իրավական խնդիրներ, ինչպիսիք են մտավոր սեփականության իրավունքների խախտումը և անձնական տվյալների գաղտնիության չպահպանումը: Այս մարտահրավերները առաջմղում են ուսումնասիրել ԱԲ-ի կիրառության հետևանքները և առաջարկել կարգավորող մեխանիզմներ:

Սույն աշխատանքը **նպատակ** ունի՝

1. ուսումնասիրելու բուհական միջավայրում ԱԲ-ի կիրառության հետևանքով առաջացող բարոյական և իրավական խնդիրները,
2. վերլուծելու, թե ինչպես կարող են բուհերը ստեղծել արդյունավետ կանոնակարգեր ԱԲ-ի գործածությունը կարգավորելու համար՝ հաշվի առնելով ուսանողների և դասախոսների շահերը, ինչպես նաև գիտական էթիկայի սկզբունքները:

Սույն աշխատանքի հետազոտական հարցերը հետևյալներն են.

- Բարոյական ի՞նչ խնդիրներ են առաջանում ԱԲ-ի օգտագործման հետ կապված:

- Արդյո՞ք հայկական բուհերը ունեն կոնկրետ կանոնակարգեր՝ ԱԲ-ի գործածությունը վերահսկելու համար:

Այս հարցերի ուսումնասիրությունը թույլ կտա ավելի հստակ պատկերացնել ԱԲ-ի դերը բուհական միջավայրում և դրա կարգավորման անհրաժեշտությունը՝ ապահովելով ուսումնական գործընթացի արդար և արդյունավետ ընթացքը:

2. Տեսական մշակվածություն

Այսօր արհեստական բանականության գործիքները (օր.՝ ChatGPT, Grammarly, QuilBot, Turnitin) բուհական կրթության մեջ լայն տարածում են գտել: Ուսանողները ChatGPT-ն օգտագործում են տեքստերի ստեղծման, գրավոր աշխատանքների կառուցվածքի մշակման և հարցերի պատասխանները գտնելու համար: Grammarly-ն և QuilBot-ը օգնում են բարելավել գրավոր հաղորդակցության որակը՝ շեշտելով քերականական և ոճական սխալները, օգնելով վերաձևակերպել շարադանքը: Turnitin-ը՝ որպես գրագողության դեմ պայքարող ծրագրային գործիք, թույլ է տալիս դասախոսներին բացահայտել ինչպես դասական գրագողությունը, այնպես էլ ԱԲ-ի միջոցով գրված աշխատանքները, սակայն դրա արդյունավետությունը ԱԲ-ի անընդհատ զարգացման պայմաններում վիճահարույց է համարվում [3]:

Այս գործիքների լայն կիրառությունը բուհերում, սակայն, առաջ է բերում բարոյական և իրավական մի շարք խնդիրներ, որոնք ուղղակիորեն կապված են կրթության որակի, ուսանողների ինքնուրույնության նվազման և ԱԲ-ի ստեղծած բովանդակության վերահսկելիության հետ: Նախ քննենք բարոյական խնդիրները:

1. **Գրագողություն:** ԱԲ-ի գործիքները կարող են նպաստել ակադեմիական գրագողությանը (պլագիատ)՝ ուսանողների համար հեշտ հասանելի դարձնելով պատրաստի տեքստերը: Որպես արդյունք ստեղծվում են մեծ թվով աշխատանքներ առանց ուսանողների «մտավոր մասնակցության» [3, 7, 8, 14]:
2. **Ուսանողների ինքնուրույնության նվազում**: Ուսանողները հաճախ ԱԲ-ից կախվածություն են ձեռք բերում, ինչը նվազեցնում է նրանց ստեղծարար

կարողությունները և ինքնուրույն մտածելու հմտությունը: Սա մտահոգիչ է, քանի որ ինքնուրույնությունն ու ստեղծարարությունը հիմնական որակներ են՝ հետագա մասնագիտական հաջողության համար [4, 6, 7]:

3. **Կեղծ տվյալների տրամադրում:** ԱԲ-ի գործիքները կարող են հրամցնել ոչ ճշգրիտ կամ կեղծ տվյալներ (այսպես կոչված՝ «hallucinations»), ինչը կարող է լրջորեն վնասել ուսումնական գործընթացը՝ կա՛մ որևէ հարցի վերաբերյալ սխալ տեղեկություններ և պատկերացումներ արմատավորելով ուսանողների մեջ, կա՛մ նվազեցնելով նրանց վստահությունը ԱԲ-ի տեխնոլոգիաների հանդեպ [14]:

Ինչ վերաբերում է իրավական խնդիրներին, ապա այդ առումով հիմնականում քննարկվում են հետևյալները.

1. **Հեղինակային իրավունքի խախտում**: ԱԲ-ի միջոցով գրված տեքստերը հաճախ չեն ունենում հստակ հեղինակ, ինչը բարդացնում է հեղինակային իրավունքի կիրառումը՝ մատնանշելով իրավական բացերի առկայությունը [5, 15]:
2. **Անձնական տվյալների գաղտնիության չպահպանում:** Ուսանողները և դասախոսները հաճախ չեն գիտակցում, որ ԱԲ-ի գործիքներ օգտագործելիս իրենց տվյալները կարող են գրանցվել և օգտագործվել այլ նպատակներով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ են կանոնակարգեր՝ պաշտպանելու անձնական տվյալների գաղտնիությունը [1, 2, 9]:

3. Մեթոդաբանություն

Հետազոտության առաջին քայլը կլինի պարզել, թե արդյոք բուհերը ներդրել են հատուկ կանոնակարգեր՝ ԱԲ-ի օգտագործման համար: Տվայլների ստացման համար աղբյուր կհանդիսանան բուհական վեբ կայքերում հրապարակված տեղեկությունները, փաստաթղթերը և պաշտոնական բուհական քաղաքականությունները և ուղեցույցները, որոնք անդրադառնում են ԱԲ-ի

գործիքների կիրառմանը: Այդ աղբյուրները կօգնեն պարզել՝ արդյոք բուհերը ԱԲ-ի օգտագործման կարգավորման ոլորտում հստակ մոտեցում որդեգրել են, և, եթե այո, ապա կանոնակարգերը ինչպիսի սահմանափակումներ են նախատեսում գրագողության կանխարգելման, ստեղծարարության խրախուսման և անձնական տվյալների պաշտպանության առումով:

Հաջորդիվ կուսումնասիրվեն միջազգային այն բուհերը, որոնցում ԱԲ-ի գործածությունն արդեն կանոնակարգված է, և որոնք հայտնի են ԱԲ-ի գործիքների վերաբերյալ իրենց առաջադեմ մոտեցումներով: Մասնավորապես կվերլուծվեն այն սահմանափակումներն ու ցուցումները, որոնք ներկայացվել են ուսանողներին և դասախոսներին ԱԲ-ի գործիքների օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև կանոնակարգերի ազդեցությունը՝ ուսանողական հաջողությունների, ակադեմիական էթիկայի պահպանման և հիշյալ գործիքների պատասխանատու կիրառման վրա:

Հետազոտությունն իրականացվելու է բովանդակային վերլուծության մեթոդով:

4. Վերլուծություն

Հայաստանի բուհերում ԱԲ-ի օգտագործման իրավիճակը: Հայաստանում ԱԲ-ի կիրառումը բուհական միջավայրում նոր է զարգանում, բայց այն արդեն հանդիպում է բարոյական և իրավական մի շարք մարտահրավերների: Համալսարանական կայքերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ չնայած այս թեմայով պետական կարգավորումների բացակայությանը՝ ՀՀ բուհերի մեծ մասը գիտաժողովների, դասընթացների և այլ ձևաչափերով սկսել է քննարկել ուսուցման և ուսումնառության վրա ԱԲ-ի գործիքների ազդեցությունը: Ուշադրության առանցքում հատկապես այն հարցն է, թե ինչպես կարելի է պահպանել ուսանողների ինքնուրույնությունը, երբ ChatGPT-ն և նմանատիպ այլ գործիքներ հեշտացնում են ակադեմիական գրագողության հնարավորությունը: Չնայած սրան՝ ուսումնասիրությունների արդյունքում չի հայտնաբերվել հայկական որևէ բուհ, որը կունենա մշակած ուղեցույց կամ կանոնակարգ, որը ուղղակիորեն անդրադառնա ուսանողական աշխատանքների

վրա ԱԲ-ի ազդեցությանը և ապահովի կրթության մեջ ԱԲ-ի գործիքների անվտանգ և ճիշտ օգտագործում:

Խնդրահարույց է նաև այն, որ մինչ օրս հայկական բուհերում ներդրված չեն գրագողությունը բացահայտող ծրագրեր: Դա նշանակում է, որ համապատասխան վերահսկողության բացակայության պայմաններում ԱԲ-ն (ChatGPT-ն և նմանատիպ այլ գործիքներ) հեշտացնում է ակադեմիական գրագողության հնարավորությունը:

Արտասահմանյան փորձը: Հյուսիսային Եվրոպայի, մասնավորապես Դանիայի, Ֆինլանդիայի, Նորվեգիայի և Շվեդիայի բուհերը առաջատար են ԱԲ-ի բարոյական կիրառության նորմեր մշակելու հարցում: Այս երկրներում մշակվել են հստակ ուղեցույցներ, կանոններ և քաղաքականություններ, որոնք ուղղված են ԱԲ-ի գործիքների անվտանգ և պատասխանատու օգտագործմանը: Դրանք մեծ ուշադրություն են դարձնում տվյալների գաղտնիությանը, ԱԲ-ի ալգորիթմներում առկա կողմնակալությանը և ակադեմիական ազնվության հարցերին: Օրինակ՝

- Կոպենհագենի համալսարանը ներդրել է ԱԲ-ի գործիքներ, ինչպես նաև գրագողության դեմ պայքարող (հակապլագիատ) ծրագրեր ուսանողների ինքնուրույնության պահպանման և հեղինակային իրավունքի պաշտպանման համար [11],
- Հելսինկիի համալսարանը, համագործակցելով տեղական ԱԲ-ի մշակողների հետ, ստեղծել է հատուկ ուսանողական ուղեցույց, որում մանրամասն ներկայացված են այս գործիքների օգտագործման սահմանափակումները [13],
- Օսլոյի համալսարանը զարգացրել է հատուկ դասընթացներ՝ ուսանողների համար, որոնք օգնում են նրանց ճիշտ հասկանալ ԱԲ-ի գործիքների ազդեցությունը գիտական աշխատանքի վրա [9],
- Ստոկհոլմի համալսարանը մշակել է ուսանողական ուղեցույց, որում շեշտվում են հեղինակային իրավունքները և ԱԲ-ի գործիքների ազնիվ կիրառումը՝ խուսափելով ակադեմիական գրագողությունից [11]:

Վերոնշյալները փաստում են, որ այս երկրները հանդես են գալիս օրինակելի ռազմավարություններով, որոնք բուհական կրթության մեջ կարգավորում են ԱԲ-ի բարոյական և իրավական կիրառումը: Հայկական բուհերը կարող են օգտվել արտասահմանյան փորձից՝ մշակելով հստակ ուղեցույցներ և ներդնելով ԱԲ-ի գործիքների կիրառման թափանցիկությունն ապահովող մեխանիզմներ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է մեծացնել ուսանողների և դասախոսների՝ ԱԲ-ի գրագիտության մակարդակը՝ երկու կողմերի համար հավասար հնարավորություններ ստեղծելու նպատակով:

5. Եզրակացություններ

1. ԱԲ-ի գործիքների օգտագործումը բուհական կրթության մեջ առաջ է բերում բարոյական և իրավակկան խնդիրներ՝ կապված գրագողության, ուսանողների ինքնուրույնության նվազման, կեղծ տվյալների մշակման և տարածման, հեղինակային իրավունքների խախտման և անձնական տվյալների գաղտնիության չպահպանման հետ:
2. Ներկայումս հայկական բուհերում չկան մշակված ուղեցույցներ կամ կանոնակարգեր, որոնք ուղղակիորեն անդրադառնում են ուսուցման և ուսումնառության գործընթացում ԱԲ-ի գործիքների օգտագործմանը և դրանց ազդեցությանը:

6. Առաջարկություններ

1. Հայկական բուհերը կարիք ունեն ստեղծելու հստակ կանոնակարգեր, որոնք վերաբերում են ԱԲ-ի գործիքների կիրառմանը՝ ներառելով ինչպես բարոյական, այնպես էլ իրավական կողմերը: Կանոնակարգերը պետք է ընդգրկեն հրահանգներ ԱԲ-ի գործիքների օգտագործման սահմանափակումների մասին, տեղեկացնեն հեղինակային իրավունքների և գրագողության դեմ պայքարի

մասին, ինչպես նաև ընդգծեն ուսանողների ինքնուրույնության պահպանման կարևորությունը:

2. Բուհերը պետք է շարունակեն իրականացնել դասընթացներ, որոնք կբարձրացնեն ԱԲ-ի գրագիտությունը ուսանողների շրջանում՝ թույլ տալով նրանց հասկանալ և պատասխանատու կերպով օգտագործել այս գործիքները:
3. Բուհերը պետք է ներդնեն ծրագրեր, որոնք թույլ կտան մշտապես վերահսկել ԱԲ-ի գործիքների օգտագործումը և բացահայտել գրագողությունը և այլ կեղծարարություններ:

7. Գրականության ցանկ

1. Ahmad, S. F., Han, H., Alam, M. M., Rehmat, M., Irshad, M., Arraño-Muñoz, M., & Ariza-Montes, A. (2023). Impact of artificial intelligence on human loss in decision making, laziness and safety in education. Humanities and Social Sciences Communications, 10(1), 1-14.
2. Akgun, S., & Greenhow, C. (2022). Artificial intelligence in education: Addressing ethical challenges in K-12 settings. AI and Ethics, 2(3), 431-440.
3. Batista, J., Mesquita, A., & Carnaz, G. (2024). *Generative AI and Higher Education: Trends, Challenges, and Future Directions from a Systematic Literature Review*. Information, 15(11), 676. https://doi.org/10.3390/info15110676
4. Bai, L., Liu, X., & Su, J. (2023). ChatGPT: The cognitive effects on learning and memory. Brain-X, 1(3), e30.
5. Juris Centre. (2024, August 26). The legal landscape of AI-generated content: Ownership and copyright issues explored. Juris Centre. https://juriscentre.com/2024/08/26/the-legal-landscape-of-ai-generated-content-ownership-and-copyright-issues-explored/

6. Kamalov, F., Santandreu Calonge, D., &Gurrib, I. (2023). New era of artificial intelligence in education: Towards a sustainable multifaceted revolution. Sustainability, 15(16), 12451.
7. Michel-Villarreal, R., Vilalta-Perdomo, E., Salinas-Navarro, D. E., Thierry-Aguilera, R., & Gerardou, F. S. (2023). Challenges and Opportunities of Generative AI for Higher Education as Explained by ChatGPT. *Educ. Sci.*, 13(9), 856. https://doi.org/10.3390/educsci13090856.
8. Nguyen, Q. H. (2023, December). AI and Plagiarism: Opinion from Teachers, Administrators and Policymakers. In Proceedings of the AsiaCALL International Conference (Vol. 4, pp. 75-85).
9. Oslo Metropolitan University. (2024, December 15). *Artificial Intelligence Lab*. Oslo Metropolitan University. https://www.oslomet.no/en/about/tkd/it/ai-lab
10. Seo, K., Tang, J., Roll, I., Fels, S., & Yoon, D. (2021). The impact of artificial intelligence on learner–instructor interaction in online learning. International journal of educational technology in higher education, 18, 1-23.
11. Stockholm University. (2024, December 15). Guidelines on using AI-powered chatbots in education and research. *Stockholm University*. https://www.su.se/english/staff-old-do-not-use/services/teaching/guidelines-on-using-ai-powered-chatbots-in-education-and-research-1.649009
12. University of Copenhagen. (2024, December 15). Three guidelines and a new tool for using AI. University of Copenhagen Newsroom. https://pkunet-shared.ku.dk/newsroom/news/Pages/Three-guidelines-and-a-new-tool-for-using-AI.aspx
13. University of Helsinki. (2024, December 15). Generative AI at the University. *IT Helpdesk*. https://helpdesk.it.helsinki.fi/en/instructions/information-security-and-cloud-services/cloud-services/generative-ai-university

14. Williams, R., T. (2024). The ethical implications of using generative chatbots in higher education. *Frontiers in Education.* https://doi.org/10.3389/feduc.2023.1331607.
15. Zirpoli, C. T. (2024, August 26). Copyright Infringement by Generative AI: Ownership and Attribution Challenges. CRS Reports. https://crsreports.congress.gov/product/pdf/LSB/LSB10922